

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԳ ԵՒՍՏԻ

Ք.Ապարան

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թ. ժ.15:00

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ Ապարան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արկաղի Կարապետյանը:

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ Ապարան համայնքի ավագանու 21 անդամներից 18-ը՝ Արկաղի Գալուստի Կարապետյանը, Գոռ Հովհաննեսի Պետրոսյանը, Հայկ Սամվելի Սեդրակյանը, Խաչիկ Գեղամյանը, Վահան Կամոյի Մակարյանը, Կարեն Դավիթի Կարապետյանը, Դավիթ Ռուբիկի Ենոքյանը, Արթուր Վանիկի Խալաթյանը, Աղաբեկ Սևակի Մանուկյանը, Արարատ Ավդալյանը, Աղվան Երեմյանը, Հովհաննես Գալուստի Սահակյանը, Սեակ Աշոտի Սաֆարյանը, Արթուր Ժորայի Փարվանյանը, Արշակ Սուրենի Սարգսյանը, Սուրեն Սլավիկի Սարգսյանը, Արտյոմ Անդրանիկի Դավթյանը, Արամ Ասատրյանը, Արտյոմ Կարապետյանը:

ՆԻՍՏԻՑ ԲԱՑԱԿԱՑՈՒՄ ԷԻՆ՝ ավագանու անդամ, համայնքի ղեկավար Կարեն Եղիազարյանը, ավագանու անդամներ՝ Վարդան Մխիթարյանը և Արտյոմ Դավթյանը:

Նիստը վարող՝ Ա.Կարապետյանի կողմից ընթերցվեց համայնքի ղեկավարի հայտարարությունը նիստին չմասնակցելու վերաբերյալ:

Ավագանու նիստին մասնակցում էին զեկուցողներ՝ եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Նելլի Սիրեկանյանը, քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուրիասյանը, Գյուղատնտեսության, բնապահպանության և կոմունալ տնտեսության բաժնի պետ՝ Ռոբերտ Գալստյանը, համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հրայր Մկրտչյանը: Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գագիկ Մելքոնյանը, համայնքի ղեկավարի օգնական Արկաղի Ալեքսանյանը, տեսանկարահանումը և հեռարձակումը ապահովում էր, առաջատար մասնագետ՝ Մարիամ Քոչարյանը: Նիստին ներկա էին նաև „ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԳԻՏ,, ՍՊԸ-ի տնօրեն Ա.Բաբայանը և ներկայացուցիչ՝ Ա.Առաքելյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԵՐՐՈՐԳ ԵՒՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Օրակարգում էր՝

1. Հաստատել Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2022 թվականի փետրվարի 25-ի կրթող նիստի օրակարգը՝

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

2. Ապարանի համայնքապետարանի ներքին աուդիտի 2021թ գործունեության տարեկան հաշվետվության մասին:

(գեկուցող՝ Ի.Թ-աղևոսյան)

3. Ապարան համայնքի ավագանու 27.12.2021թ. N105-Ա որոշման 2-րդ մասին N3 և N7 հավելվածներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

(գեկուցող՝ Ի.Թ-աղևոսյան)

4. Ապարան համայնքի ավագանու 27.12.2021թ N104-Ա որոշման 1-ին մասի N2 հավելվածում փոփոխություն կատարելու մասին

(գեկուցող՝ Ի.Թ-աղևոսյան)

5. Ապարան համայնքի ավագանու 27.12.2021թ. N106-Ա որոշման 1-ին մասի դ) կետի N 1.4 հավելվածում փոփոխություն կատարելու մասին

(գեկուցող՝ Ի.Թ-աղևոսյան)

6. Ապարան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանում /SUՊ/ փոփոխություններ կատարելու մասին.

(գեկուցող՝ Հ.Մկրտչյան)

7.Ապարան համայնքում հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին

(գեկուցող՝ Ի.Թ-աղևոսյան)

8. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգի և վարձակալության տրամադրման դրույքաչափերի հաստատման մասին

(գեկուցող՝ Ռ.Գալստյան)

9. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական տարածքում գտնվող „Գրանտ Ռոզ,, ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

(գեկուցող՝Վ.Սուրիասյան)

10. Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քույակ գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին

(գեկուցող՝Վ.Սուրիասյան)

11. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության արտավայրի նպատակային նշանակությունները բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության փոխելուն հավանություն տալու:

(գեկուցող՝ Վ.Սուրիասյան)

12. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

(գեկուցող՝Վ.Սուրիասյան)

13. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 3.68967հա հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին

(գեկուցող՝Վ.Սուրիասյան)

14. Ապարան համայնքի մի խումբ բնակիչների հարկային արտոնություններ տրամադրելու մասին:

(գեկուցող՝ Ն.Սիրեկանյան)

15. Ապարան համայնքի կարիքների համար ՀՀ ԱՄ-ԱՀ-ԷԱԱՊԶԲ-09/22 ծածկագրով ծաղիկների ձեռք բերման նպատակով գնումների համակարգում փոփոխություններ կատարելու և մեկ անձից գնում կատարելու համար թույլտվություն տալու մասին:

(զեկուցող՝ Հ.Հովսեփյան)

16. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 16-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

2. ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ 2021Թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ձեկուցեց աշխատակազմի քարտուղար՝ Իդա Թադևոսյանը, ներկայացնելով այն, որ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-Ն, 2015թ. դեկտեմբերի 10-ի թիվ 856-Ն հրամանների պահանջները և Ապարանի համայնքապետի կողմից հաստատված 2021-2022թթ ռազմավարական ու 2021թ. տարեկան ծրագրերով, ներքին աուդիտի ծառայություն իրականացնող «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ», ՍՊԸ կողմից 2021թ աուդիտ և իրականացվել Ապարանի համայնքապետարանում և համայնքային ենթակայության Ապարանի և Արագածի կոմունալ ծառայություններում:

Հարցի զեկուցման ընթացքում տարեկան կատարված աշխատանքների ներկայացմամբ հանդես եկավ «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ», ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա.Բաբայանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 17-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

3. ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2021Թ. N105-Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ԲԴ ՄԱՍԻՆ N3 և N7 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Ձեկուցեց աշխատակազմի քարտուղար՝ Իդա Թադևոսյանը, նա ներկայացրեց «Ապարան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակազմերի 2022թ թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերի հաստատելու մասին», որոշման N3 և N7 հավելվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագիծը: Նախագծի 2-րդ կետով առաջարկություն էր ներկայացրել նաև ՔՊ խմբակցությանը, որը րվևարկությամբ հանվեց օրակարգից հետագայում ուսումնասիրելու և հիմնավորված օրակարգ բերելու համար: Նախագծի քննարկմամբ Ապարան համայնքի մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ում բացվեց «լեռնադահուկի», խումբ՝ թվաքանակը՝ 1, հաստիքային միավորը՝ 0,85, Ապարան համայնքի արվեստի դպրոց ՀՈԱԿ-ում՝ սահմանվեց 1 պահակի 0,85 հաստիքային միավոր և ավելացվեց նվազակցողի դասաժամը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 18-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

4. ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2021 Թ N 104-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՄԱՍԻՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ձեկուցեց աշխատակազմի քարտուղար՝ Իդա Թադևոսյանը, նա ներկայացրեց Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի 2022թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային

դրույթաչափերի հաստատման N 2 հավելվածում փոփոխություններ կատարելու մասին հարցը, այն է. անասնաբույժերի թվաքանակը 12-ից դարձնել 13՝ պահպանելով սահմանված հաստիքային միավորը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ - 17, դեմ - 0, ձեռնպահ - 1, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ
(Աստոյան Արամ)

(Ավագանու N 19-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

5.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2021 Թ N 106-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՄԱՍԻ N1.4 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար՝ Իդա Թադևոսյանը, նա ներկայացրեց Ապարանի համայնքում Տեղական տուրքերի և վճարների 2022թ. տեսակներն ու դրույթաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու 27.12.2021 թ N106-Ա որոշման N 1.4 հավելվածի՝ արվեստի դպրոցների սովորողներին տրված արտոնությունների բաժնի 5-րդ տոկոս կատարել փոփոխություններ: Նախագծի ըննարկմամբ՝ „Միջազգային փառատոններում հաղթողներ,, արտոնությունների տրամադրումը փոխարինվեց՝ „Միաժամանակ 2 խմբերում ընդգրկված երկսայի համար՝ 2-րդը՝ 50 %, զեղչի արտոնության կրառում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցում սովորող սաներից թիվ 47-50-ը ընդգրկված են և սովորում են միաժամանակ 2 խմբերում: Ավագանին դրական արձագանքնեց առաջարկին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ - 18, դեմ - 0, ձեռնպահ - 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 20-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

6.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ/ՏԱՊ/ ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հրայր Մկրտչյանը նա ներկայացրեց Հարթավան գյուղի բնակչության կողմից բարձրացված՝ գյուղի „Դուռնոյ ազոներ,, կոչվող տարածքում 1980-ական թվականներին կառուցված և ներկայումս վթարային վիճակում գտնվող փոքր ջրամբարի հիմնանորոգման հրատապության ու առաջնահերթության ուղղությամբ Ապարան համայնքի ավագանու ՔՊ խմբակցության կողմից աշխատակազմ ներկայացված նախագիծը՝ Հարթավան գյուղի ջրամբարի հիմնանորոգման աշխատանքներն /պատվարի վերանորոգում, տիղմից մաքրում, բետոնյա արգելապատնեշի վերակառուցում/ համայնքի 2022թ. ՏԱՊ ծրագրում ընդգրկելու մասին: Նախագծով Ապարան համայնքի ավագանու 27.01.2022թ. N 04-Ա որոշման հավելվածում առաջակվեց կատարել համապատասխան փոփոխություն և ծրագրի ֆինանսավորումն իրականացնել ՏԱՊ-ի մյուս ծրագրերից տնտեսումների, ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդի, ինչպես նաև լրացուցիչ միջոցների ներգրավման հաշվին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ - 18, դեմ - 0, ձեռնպահ - 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 21-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

7.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ /ԿԱՄ/ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար՝ Իդա Թադևոսյանը, նա ներկայացրեց Ապարան համայնքում հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու և կազմը հաստատելու մասին հարցը: „ Կարեն Եղիազարյան,, կուսակցությունների դաշինքի և ՔՊ խմբակցության դաշինքի կողմից համամասնության կարգով՝ 2/1 ներկայացվեցին հետևյալ ավագանու անդամները՝ Աղաբեկ Մանուկյան և Վարդան Մխիթարյան /ԿԵ դաշինք/ և Արշակ Սարգսյան /ՔՊ/: Մրցութային հանձնաժողովին հանձնարարվեց բոլոր հնարավոր միջոցներով պատշաճորեն ապահովել մրցույթների կազմակերպման հրապարակայնությունը, թափանցիկությունը և օրյեկտիվությունը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ - 18, դեմ - 0, ձեռնպահ - 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 22-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

8. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի գյուղատնտեսության, բնապահպանության և կոմունալ տնտեսության բաժնի պետ՝ Ռ.Գալստյանը, նա ներկայացրեց ՀՀ կառավարության 14.01.2010թ. թիվ 16-Ն, 14.04.2011թ. թիվ 389-Ն և 02.09.2016թ. թիվ 898-Ն որոշումների պահանջներով, Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը և վարձակալության տրամադրման վարձավճարների դրույթաչափերը հաստատելու մասին հարցը: Հարցի քննարկմամբ առարկություններ չեղան:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ - 18, դեմ - 0, ձեռնպահ - 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 23-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

9. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ „ԳՐԱՆՏ ՌՈԶ,, ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուրիսայանը ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող „ԳՐԱՆՏ ՌՈԶ,, ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող /02-102-0114-0036 կադաստրային ծածկագրով/ 2.8056հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նշանակության փոխելուն և այն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության դարձնելու մասին հարցը: Ներկայացվեց նաև , որ հողամասում կառուցվելու է ջերմոցային տնտեսություն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ - 18, դեմ - 0, ձեռնպահ - 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 24-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

10. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔՈՒՉԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուրիսայանը ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 02-111-0324-0001 ծածկագրից 0.76059հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արտավայրի գործառնական նշանակությունը և 02-111-0321-0001 ծածկագրից 2.63344հա ջրային նպատակային նշանակության լճերի գործառնական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալ, քանի որ հողատարածքները սեփականաշնորման հանձնաժողովի կողմից քաղաքացիներին հատկացվել են որպես գյուղատնտեսական վարելահող, սակայն կադաստրային քարտեզներում հաշվառված են որպես պետական սեփականություն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ - 18, դեմ - 0, ձեռնպահ - 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 25-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

11.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՈՂԱԿՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂ. ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուքիասյանը ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-077-0101-0002 ծածկագրից՝ 0,07137հա գյուղատնտեսական արոտավայրի նշանակությունը փոխելու հավանություն տալու և այն որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության դարձնելու մասին հարցը: Ներկայացվեց նաև, որ առաջարկված հողակտորը հարակից է բնակելի կառուցապատման հողամասերին և նպատակահարմար է բնակելի կառուցապատման համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 26-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

12.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուքիասյանը, այն մասին, որ թույլատրելի համայնքի ղեկավարին՝ Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք 07.10.2021թ ՀՀ կառավարության 1661-Ա որոշումամբ ճանաչվել են հանրային գերակա շահ, ուղղակի վաճառքով օտարել «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» փակ բաժնետիրական ընկերությունը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 16, դեմ – 0, ձեռնպահ – 2, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ
(Պետրոսյան Գոռ)
(Մակարյան Վահան)

(Ավագանու N 27-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

13.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3.68967ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուքիասյանը, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 02-040-0310-0001 ծածկագրից՝ 3.40143հա և 0.28824հա ընդամենը՝ 3.68967հա գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ արոտավայրի գործառնական նշանակության հողամասը փոխելուն հավանություն տալու և այն որպես անտառային նպատակային նշանակության անտառների գործառնական նշանակության դարձնելու մասին: Ներկայացվեց, որ առաջարկված հողակտորները ծածկված են անտառային շերտով, սակայն քարտեզագրման ժամանակ հաշվառվել է որպես արոտավայր: Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը նպատակաուղղված է «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» փակ բաժնետիրական ընկերությունը կողմից ներկայացված ներդրումային ծրագրի իրագործմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 28-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

14.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԳԻԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Ջեկուցեց եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Նելլի Սիրեկանյանը, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները առաջարկվեց Ապարան համայնքի 6 բնակավայրերի 8 քաղաքացիների տրամադրել հարկային արտոնություններ՝ հողի հարկի տույժ 394.356 դրամի չափով, փոխադրամիջոցի գույքահարկի տույժ՝ 107.578 դրամի չափով, ընդամենը՝ 501.934 դրամ: Ավագանին ծանոթացավ նախագծին կից ներկայացված հավելվածին, որտեղ առկա էին բոլոր դիմումատուների վերաբերյալ տվյալները: Հարցի վերաբերյալ կարծիքների փոխանակում տեղի ունեցավ ավագանու անդամների միջև:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 29-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

15.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱԱՊՁԲ-09/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ջեկուցեց ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Հովսեփյանը այնպես, որ Ապարան համայնքի ավագանու 27.01.2022թ. N03-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հողվածային ծախսերով նախատեսված, Ապարան համայնքի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱԱՊՁԲ-09/22 ծածկագրով ծաղիկների ձեռք բերման համար 17.02.2022թ. գնումների պաշտոնական կայքում մուտքագրված էլեկտրոնային աճուրդով գնումը չի կայացել՝ համակարգի խափանման պատճառով: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության մասնագետի կողմից ստացված էլեկտրոնային նամակի և հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրի ամենասեղմ ժամկետում լուծման դեպքում անգամ, գնման ընթացակարգը հնարավոր չէ իրականացնել գնման պահանջով նախատեսված ժամկետում, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության N526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի, ա) և բ) պարբերությունների պահանջներով, առաջակություն ներկայացվեց թույլատրել Ապարան համայնքի ղեկավարին ա/թ մարտի 8-ին ընդառաջ ծաղիկների ձեռքբերման նպատակով, հրատապ մեկ անձ մրցույթի ձևով գնում կատարել մասին: Միաժամանակ Ապարան համայնքի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱԱՊՁԲ-09/22 ծածկագրով ծաղիկների ձեռք բերման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության armeps համակարգ մուտքագրված հրավերը համարել անվավեր՝ համակարգի խափանման պատճառով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 30-Ա որոշում)



















ԼՍԵՑԻՆ.

16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՍԱՇԵՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար՝ Իդա Թադևոսյանը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամ սահմանվեց՝ 2022թ. մարտի 25-ը ժամը 15:00-ն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ - 18, դեմ - 0, ձեռնպահ - 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 31-Ա որոշում)

Ավագանի՝	(կողմ 18)	(դեմ-0)	(ձեռնպահ-0)
Կարապետյան Արկաղի			
Մակարյան Վահան			
Սեդրակյան Հայկ			
Կարապետյան Կարեն			
Ենոքյան Դավիթ			
Խալաթյան Արթուր			
Գեղամյան Խաչիկ			
Մանուկյան Աղաբեկ			
Երեմյան Աղվան			
Սահակյան Հովհաննես			
Փարվանյան Արթուր			
Ասատրյան Արամ			
Սաֆարյան Սեակ			
Դավթյան Արտյոմ			
Սարգսյան Սուրեն			
Սարգսյան Արշակ			
Կարապետյան Արտյոմ			
Պետրոսյան Գոռ			

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝



Ա. Կարապետյան